



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն _____ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ _____

Թեմա Սովորողների գեղագիտական դաստիարակությունը
տեխնոլոգիայի դասերին՝ «Փայտի գեղարվեստական մշակում»
թեմայի դասավանդման շրջանակներում

Կատարող _____ **Ղազարյան Մարգարիտա Յուրիի**
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար _____ **տեխ.գիտ.թեկն., դոցենտ Նունե Օրդյան**
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
§1. Փայտանյութի գեղարվեստական մշակումը.....	5
1.2. Փայտի փորագրության տեսակները.....	7
§2. Խարափորագրում.....	11
§3. «Խարափորագրում» թեմայի դասի պլան.....	12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	16
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական բովանդակության կարևոր բաղադրիչներից մեկը դա ստեղծագործական ունակությունների և կարողությունների զարգացումն է: Այս իմաստով նշանակալի դեր ունի նաև «Տեխնոլոգիա» առարկան: Առերևույթ միայն ձեռքի վարժանք ենթադրող առարկայի ճիշտ դասավանդումն էապես նպաստում է ստեղծագործական մտքի ու երևակայության արդյունքով նույնքան ստեղծագործաբար պատրաստվող ձեռագործ աշխատանքների ստեղծմանը:

«Տեխնոլոգիան» ճանաչողական գիտություն է, որն ուղղված է մարդու գործունեության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործունեության նկարագրման և վերլուծման, այդ գործունեության արդյունքների զարգացման և միջոցների ձեռքբերման և կիրառման ուսումնասիրմանը:

Առարկայի նպատակն է սովորողին նախապատրաստել ժամանակակից տեղեկատվական արդյունաբերական հասարակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքին և դաստիարակել կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ անձնավորություն, այսինքն՝ աճող սերնդի նախապատրաստումն է ապագային իսկ ստեղծագործական ունակությունների զարգացումը՝ դեպի նպատակ տանող մայրուղին է: Ընդհանրապես «Տեխնոլոգիա» առարկան սովորողին զինում է անհրաժեշտ տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով:

Միջին դպրոցում «Տեխնոլոգիա» առարկան սովորողին ապահովում է տարրական այնպիսի գիտելիքներով ու հմտություններով, որոնք հետագայում ուսումը շարունակողների համար հիմք կձառայեն տարբեր արհեստներին տիրապետելու գործընթացում: «Տեխնոլոգիա» առարկայի ծրագիրը ներառում է «Փայտի գեղարվեստական մշակում» թեման և դրան առնչվող հարցերը: Այն սովորողներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալ փայտի գեղարվեստական փորագրության ձևերին, տեսակներին փորագրության ծագման պատմությանը, կարողանում են ճիշտ

ընտրել փայտի փորագրման համար նախատեսված գործիքները և նպատակային օգտագործել, իմանում են զարդաքանդակի համար օգտագործվող նյութերը և դրանց օգտագործման ձևերը, կատարում են սեփական նախաձեռնությամբ կոմպոզիցիաներ և փորագրություններ: Այս թեմայի շրջանակներում սովորողները սովորում են խարափորագրում, կատարում են ինքնուրույն գործնական աշխատանք:

Տվյալ թեմայի հետազոտության վարկածը կայանում է նրանում, որ «Տեխնոլոգիա» առարկայի «Փայտի գեղարվեստական մշակում» թեմայի ուսուցումը նպաստում է սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

§1. Փայտանյութի գեղարվեստական մշակումը

Փորագրությունը փայտի վրա առաջացել է դեռևս հին ժամանակներից: Մարդիկ պատկերում էին կենդանիներին, թռչուններին, արև, լուսին և ենթարկվում էին դրանց՝ համարելով, որ փորագրված կերպարները իրենց տուն երջանկություն կբերեն, և կպահպանեն տանտերերին բոլոր տեսակի անհաջողություններից: Հին սլավոնացիները ծառը համարում էին միջնորդ մարդու և արևի միջև: Այն բարեկեցության և երջանկության, երկարակեցության և առողջության սիմվոլ էր հանդիսանում: Փայտից տարբեր տեսակի ապրանքներ մտել են մեր կյանք: Իր կիրառության բազմազանությամբ բնափայտը չուներ իրեն հավասարը: Նրանից պատրաստվում էին գործնականում կյանքի համար անհրաժեշտ ամեն ինչ՝ տներ, կահույք, ափսեներ, օրորոցներ, խաղալիքներ, կամուրջներ, նավակներ և այլն: Երաժշտական գործիքները նույնպես պատրաստվում էին փայտից:

Յուրաքանչյուր վարպետ, կատարելով այս կամ այն գործը բնափայտից փորձում էր այն գեղեցիկ անել՝ ցույց տալով ծառերի բնական գեղեցկությունը: Փորագրությունը հանդիսանում էր բնափայտից պատկերազարդումների ամենահին միջոցներից մեկը:

Փորագրությամբ էին զարդարում ափսեները, կահույքը, նավերը: Փորագրությունը կատարվում էր տարբեր տեխնիկայով: Օրինակ, ցանցկեն փորագրությունը օգտագործվում էր ամենից հաճախ տների, կահույքի, ափսեների զարդարման համար, իսկ քանդակագործական փորագրությունը՝ նավերի զարդարման համար (նավի քթային հատվածը որևէ կենդանու կամ թռչնի տեսքով էին պատրաստում կամ էլ պատկերում էին աստծուն) ինչպես նաև այն օգտագործում էին փայտյա խաղալիքների և հուշանվերների պատրաստման համար: Ներկա ժամանակներս փորագրությունը իր տեղն է գտնում ամառանոցների, քրթեջների, տաղավարների, մանկապարտեզների զարդարման մեջ:

Հայկական միջնադարյան գրականության մեջ կան բազմաթիվ վկայություններ փայտի գեղարվեստական մշակման մասին: Հնագիտական հետազոտությունների հետևանքով գտնվել են բազմաթիվ փայտյա առարկաներ, որոնք ունեն մեծ պատական նշանակություն: Վկայությունները հիմնականում վկայում են փայտյա այն

գեղարվեստական իրերին, որոնք կապված են քրիստոնեական կրոնի և եկեղոցու հետ: Հայտի է, որ փայտը չի կարող երկար գոյատևել, սակայն ստեղծագործական գանձերի մի շարք նմուշներ պահպանվել են մինչև մեր օրերը: Հայկական միջնադարյան գեղարվեստական փորագրության գլուխգործոցն է համարվում XII դարի՝ 1134 թվականի, Մշո Առաքելոց եկեղեցու դուռը, որը հայ տարագիրները համաժողովրդական աղետի օրերին կյանքի գնով են փրկել և Հայաստան հասցրել: Դռան շրջանակի վերևի մասում ուղղանկյուն տեսարան է: Մակերեսը ժաժկված է երկրաչափական, աստղաձև, զարդահյուս փորագրությամբ: Փորագրված է արձանագրություն: Բարձրաքանդակով պատկերված են երկու ձիավոր, նրանց հանդերձանքը հիշեցնում է մինչև XX դարը պահպանված Սասունի հանդերձանքը: Այդ տեսարանի երկու կողմից դռան անկյուններում կնոջ գլխով թռչուն է պատկերված: Դռան մյուս երկու կողմում դարձյալ շրջանակի վրա պատկերված են բնական ու հեքիաթային կենդանիներ:

Փայտի գեղարվեստական մշակումը չէր սահմանափակվում միայն փորագրությամբ և բարձրաքանդակով: Փայտի մակերևույթը ծածկվում էր զարդաձևերով՝ կազմված արծաթյա նախշերից, ոսկրի, սադափի, կրիայի ոսկրի, ինչպես նաև այլ գույնի փայտի կտորներից: Տվյալ ձևով զարդարում էին երաժշտական գործիքները, զարդատուփերը, սեղանների մակերեսները, մատուցարանները, կահ կարասին և այլ կենցաղային իրեր: Հայաստանի Պետական Պատմագիտական Թանգարանում կան նաև 1253թ-ի գլուխգործոց Տաթևի վանքի փայտյա դուռը: Մեծ հետաքրքրություն են իրենցից ներկայացնում նաև Էջմիածնի տաճարի դռները, գահերը: Փայտի փորագրության գեղեցիկ նմուշներ են նաև Սևանի՝ IX դարի խոյակները: Ժանեկանման նրբին փորագրության մեջ զարդաքանդակային շերտերի հետ միասին առկա են բուսական և կենդանական պատկերներ:

Չափազանց հետաքրքիր են նաև միջնադարյան գրակալները: Դրանք ամբողջովին փայտից են, ծալովի: Մակերեսները ծածկված են փորագիր կամ բարձրադիր զարդանկարներով: Գրակալները պատրաստելիս պահանջվում էր մեծ վարպետություն: Վրայի փորագրությունները կատարվում էին նրբությամբ, գծերի ամրությամբ և համաչափորեն:


1.2. Փայտի փորագրության տեսակները

Ուռուցիկ փորագրություն

Ուռուցիկ փորագրությունում տախտակի գծակարից ազատ բոլոր մասերը խորացվում են 2-5 մմ: Այդպիսով գծանկարը դառնում է ֆոնից բարձր՝ կազմելով հարթ մկերեսով ռելիեֆ, որի վրա ներկը քսվում է սպունգով կամ ներկազլանակով, ապա ձեռքով կամ մամլիչով հավասարաչափ սեղմում է թուղթը, որի վրա արտատպվում է տախտակին եղած պատկերը: Նման եղանակով էստամպներ պատրաստելուն են ծառայում փայտագրությունը և լինոփորագրությունը:

Ուրվագծային փորագրություն

Ըստ կատարման տեխնիկայի Ուրվագծային փորագրությունը հանդիսանում է ամենահասարակը: Ուրվագծային փորագրությունը իրենից ներկայացնում է երկրաչափականի տարատեսակ: Պատկերները, որոնք կատարվում են փորագրության այդ տեսակի համար, հիշեցնում են հստակ գրաֆիկական նկար: Կիրառելով կտրման տարբեր տեսակներ և ուղիղ, կոր, պարուրակաձև և այլ գծերի համադրումը, կարելի է հասնել ձևերի մեծ բազմազանությանն կոմպոզիցիոն որոշումների: Ուրվագծային փորագրությունը պահանջում է գործիքներին ազատ տիրապետելու ունակություն, ուշադրություն և մեծ խնամք աշխատանքի կատարման ժամանակ: Փորագրության համար անհրաժեշտ է ունենալ լավ կառավարվող գործիք, քանի որ ուրվագծային փորագրության ժամանակ կտրումը հաճախ պետք է լինում անել բոլոր ուղղություններով: Ուրվագծային փորագրությունը իրականացնում են հետևյալ կերպ: Դանակը այրում են բռունցքի մեջ սայրով դեպի քեզ և ուժով տանում են նկարի գծերի վրայով: Դանակաձը տախտակի հարթության վրա ուղղահայաց դիրքում չէ, այլ մի փոքր թեքված է դեպի կողք: Այդպես են արտադրում տարրերի մակաճեղքումը, որը պետք է դուրս հանվի փայտե մակերևույթից:



Շեղակով փորագրություն

Այնուհետև գալիս է կեղծելու փուլը: Ձեռքում դանակի դիրքը չի փոխվում, միայն ձեռքն է հակում հակառակ ուղղության վրա, և այդ դիրքով նույնպես ուժի գործադրմամբ կեղևատում են ամձնում: Արդյունքում դուրս է գալիս մակերևույթից եռանիստ փայտե շերտը: Ուրվագծային փորագրության լայնությունն ու խորությունը կարող է պահպանվել միևնույն կերպով նկարի ամբողջ ընթացքում, բայց կարող է լինել տարբեր՝ կախված հեղինակի հղացումից: Առաջին դեպքում փորագրությունը ստացվում է չոր-մետաղալարային, երկրորդ դեպքում կտրված ուրվագծերի լայնությունն ու խորությունը ստեղծում է պլաստիկ դիթմ:

Երկրաչափական փորագրություն


Երկրաչափական փորագրության բոլոր տարրերը իրենցից ներկայացնում են հասարակ երկրաչափական կերպարներ, որոնք ձևավորվում են ուղիղ և կոր գծերով, կամ էլ քառանիստ կամ կիսաշրջանաձև կտրվածքների համադրմամբ: Երկրաչափական փորագրության հարաբերական պարզությունը և նրա դեկորատիվությունը այդ փորագրությունը դարձրին շատ ճանաչված: Լույսի շողի արդյունավետ խաղով նկարը հնարավորություն է տալիս լավ զարդարել բավականին տարբեր արտադրանքներ, օրինակ խոհանոցային դարակները, պատի նկարները, հայելիները և այլն: Երկրաչափական փորագրության հիմնական տարրերն են երկնիստ, եռանիստ կտրվածքներն են տարբեր լայնությամբ, խորությամբ, կոնֆիգուրացիայով, ինչպես նաև տարբեր տեսակի քառանիստ կտրվածքները և շեղագիծ կտրվածքները փակագծերի տեսքով: Նախշերի կոմպոզիցիաները ստեղծվում են այդ տարրերի կրկնման ուղիով, որոնք ինչոր երկրաչափական պատկերի մեջ են ներառված: Երկրաչափական փորագրության մեջ առավել տարածված են եռանիստ կտրվածքները (եռանկյունները), որոնք տարբերվում են ըստ ձևի և չափսի, այդ պատճառով էլ նման փորագրությունն էլ հաճախ անվանում են եռանիստ-կոտրվածք:

Եռանիստ-կոտրվածքային փորագրության պատկերազարդումը շատ տարբեր է լինում: Լավ համակցելով ըստ ձևի և չափսի տարբեր բուրգիկները կարելի է ստանալ բազմազան Նախշերի քանակություն՝ կտրվածքների, օձիկներ, եղևնիներ, աստղիկներ, վարդակներ և այլն:

Հավասարասրուն եռանկյուն փորագրություն

Երկրաչափական փորագրության բոլոր տարրերը իրենցից ներկայացնում են հասարակ երկրաչափական կերպարներ, որոնք ձևավորվում են ուղիղ և կոր գծերով, քառանիստ կամ կիսաշրջանաձև կտրվածքների համադրությամբ:

Երկրաչափական փորագրության հարաբերական պարզությունը և նրա դեկորատիվությունը այդ փորագրությունը դարձրին շատ ճանաչված: Լույսի շողի արդյունավետ խաղով նկարը հնարավորություն է տալիս լավ զարդարել բավականին տարբեր արտադրանքներ, օրինակ խոհանոցային դարակները, պատի նկարները, հայելիները, և այլն:



Նախշ՝ «Եռակողմ ճառագայթում կտրվածքով»:

«Ճառագայթում» նախշը տանում են տախտակի մակերևույթի վրա: Սկզբից չափողական գործիքների միջոցով տանում են առանցքային գծեր, որոնք բաժանում են տախտակիկը հավասար մասերի բնափայտի շերտի երկարությամբ: Հետո տանում են քառակուսիների անկյունագծերն այնպես, որպեսզի դրանք հստակ համընկնեն և ձևավորեն հորիզոնական և ուղղահայաց գծեր և խորացնում են դրանց՝ անելով երեքական կտրվածք եռանկյան կենտրոնից: Կատարելով կտրվածքը, փորագրիչը տանում են անկյան կողմերից մեկի վրա հենելով դրա վրա՝ կտրում են սահմանները: Յուրաքանչյուր եռանկյան մեջ ստացվում են երեք կտրված սահմաններ:

Եղեգնաձևային փորագրություն

Եղեգնաձևային փորագրությունը իրենից երկրաչափական փորագրության տարատեսակ է ներկայացնում: Եղեգնաձևային փորագրությունը կատարում են կիսաշրջանագծային փորագրիչներով, ինչպիսիք են դանակ-շեղակը: Կիսաշրջանագծային փորագրիչի օգտագործման արդյունքում բնափայտի մակերևույթին մնում է հետք, որը նման է եղեգին, սրանից էլ ծագել է այս բառը:

Եղեգնաձևային փորագրությունը օգտագործվում է տարբեր կոմպոզիցիոն տարբերակներում:

Ցանցկեն փորագրություն

Սա հարթ ռելիեֆային փորագրություն է, որում ֆոնը պատկերված է ամբողջությամբ այնպես, որ նկարը ստացվում է թափանցիկ: Ցանցկեն փորագրության պատկերազարդային մոտիվները պակաս բազմազան չեն, որքան հարթ ռելիեֆային փորագրության այլ տեսակներում:

Ցանցկեն փորագրությունը կատարում են լորենու, լաստենու, կեչու, թխկու ընկույզի բնափայտերի վրա: Ցանցկեն բացվածքները կտրում են շաղափի և սղոցի օգնությամբ, կախված պատկերազարդի բնույթից, և վերամշակում են տարբեր գամփորներով՝ միջինով, փոքրով, խոշորով և այլն: Այնտեղ որտեղ չի կարելի կիրառել գամփորը, պատկերազարդի ձևերը մշակում են դանակով: Արտադրանքներ վերամշակում են ինչպես երեսից, այնպես էլ հակառակ կողմից՝ հստակեցնելով այդպես պատկերազարդային կոմպոզիցիայի ուրվանկարը:

Շեղ գծերի համար սղոցները՝ արտաքին ուրվագծով, անվանում են շրջադարձային: Նման սղոցի շերտի լայնությունը 4-ից 15մմ է: Ի տարբերություն հասարակ սղոցի՝ շրջադարձային սղոցի շերտը շրջվում է, ինչը հնարավորություն է տալիս առանց տվյալ արտադրանքը շրջելու՝ անել սղոցումներ տարբեր ուղղություններով:

Մանր անցքերը շաղափիչով են անում:

§2. Խարափորագրում

Փայտանյութի գեղարվեստական մշակման բազմատեսակ ձևերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում դեկորատիվ խարափորագրումը: Այն զարգացել է փայտի գեղարվեստական մշակման մյուս ճյուղերին զուգահեռ, հաճախ լրացնելով դրանց կամ հանդես է եկել որպես առանձին ճյուղ:

Նախկինում խարափորագրության համար օգտագործում էին կրակի վրա տաքացրած մետաղե ձողեր: Այժմ խարափորագրությունը կատարվում է տարբեր եղանակներով՝ տաք արտատպում, տաք նկարում, բաց կրակի վրա, արևի տակ խոշորացույցի օգնությամբ, թթուներով, խառատային հաստոցի վրա:

Խարափորագրությունը փայտի գեղարվեստական մշակման մի ձև է, որը կիրառվում է հուշանվերների, կահույքի, զանազան դետալների մշակման ժամանակ: Խարափորագրություն նպատակահարմար է կատարել նրբատախտակի կամ փափուկ փայտատեսակների (լորենի, լաստենի) վրա:

Նախքան աշխատանքն սկսելը մակերևույթը մշակում են հղկաթղթով: Նկարը փայտի վրա փոխանցվում է պատճենահան թղթի օգնությամբ:

Խարափորագրումը կատարվում է խարափորագրիչի օգնությամբ: Աշխատամասը (ծոված մետաղալար) ամրացված է պլաստմասսե բռնակից դուրս եկող բույթին եւ տաքացվում է էլեկտրական հոսանքով: Աշխատամասի գլխիկները կարող են լինել տարբեր ձևերի: Սարքն էլեկտրական ցանցին միացնելուց հետո կարգավորիչի օգնությամբ ընտրել համապատասխան տաքացման ջերմաստիճանը: Աջ ձեռքով բռնել բռնակից (ինչպես մատիտը): Աշխատել այն ժամանակ, երբ գլխիկը կստանա մուգ կարմիր գույն:

§3. «Խարափորագրում» թեմայի դասի պլան

Առարկա	Տեխնոլոգիա
Դասարան կիսամյակ	և 5-րդ դասարան, II կիսամյակ
Թեմայի գլուխ թեմա	և Խարափորագրում
Օգտագործվող նյութեր՝	<p>Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, 2014թ. «Տիգրան Մեծ», 2014 -5. Դասագիրք հանրակրթական դպրոցի</p> <p>Տեսանյութ</p> <p>փայտ, հղկաթուղթ, խարափորագրիչ, պատճենահան թուղթ, մատիտ</p>
Դասի նպատակ	<p><u>Ձևավորել</u></p> <ul style="list-style-type: none"> • գիտելիքներ խարափորագրման գործընթացի վերաբերյալ, • աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի ու հարմարանքների վերաբերյալ • խարափորագրիչով անվտանգ աշխատելու կանոնների վերաբերյալ: <p><u>Զարգացնել հմտություններ</u></p> <ul style="list-style-type: none"> • ճիշտ գործածելու խարափորագրիչ սարքը, • նկարը թղթից փայտի վրա անցկացնելու: • Փռայտի վրա խարափորագրիչով նախշեր անելու: <p><u>Սոցիալական</u></p> <ul style="list-style-type: none"> • մոտավոր և ճշգրիտ չափումներ կատարելու, արդյունքները գնահատելու կարողություններ, • սեփական տեսակետը հիմնավորելու և պաշտպանելու կարողություններ: • խմբում աշխատելու ունակություն, • միմյանց լսելու, օգնելու, խրախուսելու, արդյունավետ շփվելու հմտություններ
Վերջնարդյունքները	<p><i>Նկարագրի խարափորագրության տեխնիկայի ընթացքը և կիրառի գործնականում:</i></p> <p><u>Գիտելիք</u></p> <ul style="list-style-type: none"> • իմանա, ինչպե՞ս են գործածում խարափորագրիչ սարքը, • իմանա ի՞նչ է նախշակաղապարը և ինչպե՞ս են այն օգտագործում, • իմանա, ինչպե՞ս են նախապատրաստում նախշազարդվող մակերևույթը:

	<p>Հմրություններ</p> <ul style="list-style-type: none"> • կարողանա հղկաթղթով մշակել փորագրվող մակերևույթը, • կարողանա նկարն անցկացնել փայտե մակերևույթի վրա, • կարողանա միացնել խարափորագրիչը և ճիշտ կարգավորել այն, • կարողանա կիրառել խարափորագրիչը փայտի վրա նախշազարդելու համար: <p>Վերաբերմունք</p> <ul style="list-style-type: none"> • կարևորի սեփական ուժերով տվյալ թեմայի շրջանակներում հետազոտություն իրականացնելը, • կարևորի ժամանակն արդյունավետ օգտագործման հմտության զարգացումը, • կարևորի ինքնակրթության մեթոդների զարգացումը <p>Արժեք</p> <ul style="list-style-type: none"> • արժևորի ձեռք բերված գիտելիքների կիրառման դերը շրջապատող աշխարհում:
<p>Դասի ընթացք/ ընտրված մեթոդ/ներ</p>	<p>ԽԻԿ համակարգ, «Քառաբաժան», «Փոխներգործուն գրառումների համակարգ», «Զրույց»</p>
<p>Կապը ՀՊԶ-ի հետ</p>	<p>Հ5 - կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս,</p> <p>Հ26 - ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ,</p> <p>Հ28 - դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր,</p> <p>Հ30 - գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ,</p> <p>Հ32 - արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ,</p> <p>Հ46 - դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր,</p> <p>Հ51 - կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:</p>

ԶԱՐԴԱՏՈՒՓԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏ

№	Գործողությունների կատարման հաջորդականությունը	Գրաֆիկական պատկերը	Գործիքներ և հարմարանքներ
1.	Նյութի ընտրություն		Համացանց, գրականություն
2.	Դետալի չափումներ		Անկյունակ, քանոն, մատիտ
3.	Նախապատրաստվածքի սղոցում		Մետաղե սղոց
4.	Նախապատրաստվածքի խարտոցում		Խարտոց
5.	Նախապատրաստվածքի հղկում		Հղկաթուղթ
6.	Զարդանախշի ընտրություն		Համացանց, գրականություն
7.	Զարդանախշի չափադրում		Քանոն, մատիտ

8.	Խարափորագրում		Խարափորագրի չ
9.	Ջարդատուփի սունձում		Սոսինձ (ՊՅԱ), վրձին
10.	Դետալի հղկում և հարթեցում		Հղկաթուղթ
11.	Լաքապատում		Լաք (ՄԼ-228), վրձին
12.	Ներքին մշակում		Սոսինձ (ՊՅԱ), թավշյա թուղթ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով հետազոտական աշխատանքը հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

- «Տեխնոլոգիա» առարկայի գործնական աշխատանքները մեծ ազդեցություն են ունենում սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորման գործում,
- «Փայտի գեղարվեստական մշակում» թեմայի դասավանդման ճիշտ մեթոդների ընտրությունը մեծապես կնպաստի սովորողների ստեղծագործական, աշխատանքային հմտությունների զարգացմանը և նրանց մոտ գեղագիտական ճաշակի ձևավորմանը,
- «Խարափորագրություն» թեման իր կարևոր դերն ունի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորման գործում,
- «Տեխնոլոգիա» առարկայից սովորողների գիտելիքների ստուգման համար նախընտրելի է կիրառել կիսամյակային ստեղծագործական նախագծերի հանձնարարումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Мастерим из древесины»/ Э.В. Рихвик, М. Просвещение, 1998
2. «Работы по дереву», В.И. Рыженко, Москва, 2000 год
3. Տեխնոլոգիա 5, Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, 2017
4. Տեխնոլոգիա 6, Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, 2014
5. Տեխնոլոգիա 7, Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան, 2020